ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 9-Ն

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 01.04.2015թ. կնքված ,,Դրամաշնորհի տրամադրման,, թիվ 3 պայմանագիրը,

Համայնքի ավագանին որոշում է

Համայնքի 2015թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 5484.2 հազար դրամով և հաստատել՝

ա) բյուջեի եկամտային մասը՝229493.65հազար դրամ,

բ) բյուջեի ծախսային մասը՝229493.65 հազար դրամ:

2) Բյուջեի եկամտային մասի,,Ընթացիկ սուբվենցիա,, տողն ավելացնել 5488.0 հազար դրամով, իսկ ,,Պատվիրակված լիազորություններ,, տողը պակասեցնել 3.8 հազար դրամով՝համաձայն N1 հավելվածի:

3) Բյուջեի ծախսային մասում՝ տեղական ինքնակառավարման տողի,,Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ,,/4111/ հոդվածը ավելացնել 3138.0 հազար դրամով, ,,Էներգետիկ ծախսեր,, /4212/հոդվածը՝1000.0 հազար դրամով, ,,Կրթություն,, տողը 1350 հազար դրամով՝ համաձայն N 2 հավելվածի:

Քաղաքապետ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի ապրիլի
30 -ի N 9 -Ն որոշման

2015 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

Հ/հ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	2015թ.Տարեկան պլան /հազ.դրամ/
	ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	5500,00
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	17500,00
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3500,00
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3200,00
5	Այլ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2200,00
6	ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐ	7500,00
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	11000,00
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6000,00
	ԸՆԴԱՄԵՆԸ	56400,00
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	
9	ԴՈՏԱՑԻԱ	131396,20
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5342,90
11	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	4534,50
12	Ընթացիկ սուբվենցիա/աշխ.տարբ/	27318,70
	ԸՆԴԱՄԵՆԸ	168592,30
13	ՏԱՐԵԿԱՁԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	4501,35
14	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	4020,23
15	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	481,12
	Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը	229493,65

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի ապրիլի
30 -ի N 9 -Ն որոշման

Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2015թ.

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Նախատեսված գումարը /հազ.դրամ/
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	65018,6
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	42440,0
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ	20322,7
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ	22408,1
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	57500,0
6	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	500,0
7	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	3300,0
8	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ	700,0
9	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	4761,35
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5342,9
11	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	1800,0
12	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3500,0
13	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	1900,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	229493,65

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ(ՄՇՏԱԿԱՆ)ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ,,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի,, 47-րդ և 75-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության թիվ ՍԿ/ԳԲԾ/6622-14 02.12.2014թ. գրությունը

Համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից 0.02892հա մակերեսով հողամաս,անհատույց(մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ անասնաբուժական սպասարկման կենտրոն կառուցելու համար:
2. Բերդ համայնքի ղեկավարին՝ապահովել Բերդ համայնքի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության միջև սահմանված կարգով հողամասի անհատույց, մշտական օգտագործման մասին պայմանագրի կնքումը և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցումը:

Քարտուղար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

1. Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Լ.Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի N 13 սենյակը՝ 19.63 քմ մակերեսով, վարձակալությամբ, 2 տարի ժամկետով, տարեկան 240000 ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմին՝բժշկա-սոցիալական փորձաքննության աշխատանքներն իրականացնելու համար:

Քարտուղար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 12-Ա

,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ,,ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀԱԺ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական համձմաժողովի փոխնախագահ, Հայաստանի ավագանիների ասոցիացիայի նախագահ Ա.Հովհաննիսյանի,16 մարտի 2015թվականի N22 գրությունը և հաշվի առնելով,որ Բերդ համայնքը անդամագրված է ,,Հայաստանի ավագանիների ասոցիացիա,, հասարակական կազմակերպությանը՝

Համայնքի ավագանին որոշում է

,,Հայաստանի ավագանիների ասոցիացիա,, հասարակական կազմակերպության գործունեությանն աջակցելու նպատակով՝կազմակերպության հաշվի համարին փոխանցել 50 հազար դրամ:

Քանդարապետ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 13-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով՝

Համայնքի ավագանին որոշում է

Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 450000 հազար դրամ:

Քաղաքապետ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 14-Ա

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով,,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է

1. Քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի հայեցողական պաշտոններ մասը լրացնել մեկ նոր հաստիքով՝համայնքի ղեկավարի ռեֆերենտ:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքային բյուջետային կազմակերպությունների հաստիքացուցակներում կատարել պաշտոնային դրույքաչափերի փոփոխություններ և հաստատել՝

1) քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն N 1հավելվածի,

2) մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և հաստիքային դրույքաչափերը համաձայն N 2 հավելվածի,

3) արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և հաստիքային դրույքաչափերը համաձայն N 3 հավելվածի,

4) քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և հաստիքային դրույքաչափերը համաձայն N 4 հավելվածի:

Քաղաքապետ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1

Բերդ քաղաքային համայնքի ավագանու

2015 թվականի ապրիլի 30 -ի N 14-Ա որոշման

Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 24

Բերդի քաղաքապետարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4		5
1	Համայնքի ղեկավար	1	450 000,00		450 000,00
	Հայեցողական պաշտոններ				-
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180 000,00		180 000,00
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	165 000,00		165 000,00
4	Համայնքի ղեկավարի խորհրդակա	1	165 000,00		165 000,00
5	Համայնքի ղեկավարի ռեֆերենտ	1	180 000,00		180 000,00
	Համայնքային ծառայողներ				-
6	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	200 000,00		200 000,00
	Ֆինանսատնտեսագիտական բաժին				-
7	Բաժնի պետ 2.1-2	1	180 000,00		180 000,00
8	Առաջատար մասնագետ 3.1-1	1	125 000,00		125 000,00
9	Առաջին կարգի մասնագետ 3.2-9	1	80 000,00		80 000,00
10	Առաջին կարգի մասնագետ 3.2-1	1	80 000,00		80 000,00
11	Առաջին կարգի մասնագետ 3.2-7	1	80 000,00		80 000,00
	Ներքին աուդիտի բաժին				-
12	Բաժնի պետ 2.1-3	1	180 000,00		180 000,00
	ՔԿԱԳ Բերդի ՏԲ				-
13	Բաժնի պետ 1.3-1	1	256 624,00		256 624,00
14	Առաջին կարգի մասնագետ 3.2-10	1	133 603,00		133 603,00
	Աշխատակազմ				-
15	Գլխավոր մասնագետ 2.3-2	1	165 000,00		165 000,00
16	Գլխավոր մասնագետ 2.3-3	1	165 000,00		165 000,00
17	Առաջատար մասնագետ 3.1-7	1	125 000,00		125 000,00
18	Առաջատար մասնագետ 3.1-6	1	125 000,00		125 000,00
19	Առաջատար մասնագետ 3.1-3	1	125 000,00		125 000,00
20	Առաջին կարգի մասնագետ 3.2-3	1	80 000,00		80 000,00
					-
	Տեխսպասարկման անձնակազմ				-
21	Վարորդ	1	140 000,00		140 000,00
22	Հավաքարար	2	66 140,00		132 280,00
23	Հանդապահ	1	66 140,00		66 140,00
	Ընդամենը	24	3 512 507	-	3 578 647

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2

Բերդ քաղաքային համայնքի ավագանու

2015 թվականի ապրիլի 30 -ի N14Ա որոշման

Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների 11

2. Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	3	5	4		6
1	Տնօրեն	1	100 000,00		100 000,00
2	Մարզիչ	1	66 140,00	4 682,00	70 822,00
3	Մարզիչ	1	66 140,00	4 682,00	70 822,00
4	Մարզիչ	1	66 140,00		66 140,00
5	Մարզիչ	1	66 140,00		66 140,00
6	Մարզիչ	0,5	66 140,00	2 341,00	35 411,00
7	Մարզիչ	0,5	66 140,00		33 070,00
8	Մարզիչ	0,5	66 140,00		33 070,00
9	Բուժքույր	0,5	66 140,00	2 341,00	35 411,00
10	Տնտեսվար	1	66 140,00		66 140,00
11	Տեխնիկական աշխատող	1,5	66 140,00		99 210,00
	Ընդամենը	9,50	761 400,00	14 046,00	676 236,00

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 3

Բերդ քաղաքային համայնքի ավագանու

2015 թվականի ապրիլի 30 -ի N 14-Ա որոշման

Բերդի արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1 Աշխատակիցների թվաքանակը՝ 6

2 Բերդի արվեստի դպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4		5
1	Տնօրեն	1	100000		100000
2	Նկարչության դասատու	1	66140	4682	70822
3	Նկարչության դասատու	1,4	66140	4682	99210
4	Գորգագործության դասատու	1	66140		66140
5	Նկարչության դասատու	1	66140	4682	70822
6	Տեխն.աշխատող	1	66140		66140
	Ընդամենը	6,4	430700	14046	473134

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 4

Բերդ քաղաքային համայնքի ավագանու

2015 թվականի ապրիլի 30 -ի N 14-Ա որոշման

Բերդի քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 2
2. Բերդի քաղաքային գրադարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4		5
1	Տնօրեն	1	100000		100000
2	Գրադարանավարուհի	1	66140	4682	70822
	Ընդամենը	2	166140		170822

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 15-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ ԿԵՏԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով՝

Համայնքի ավագանին որոշում է

1. Հ.Աղամյան 1/1 հասցեում գտնվող 28.62/24.73.8քմ մակերեսով ավտոտնակը՝31482 դրամով, և նրա պահպանման ու սպասարկման 60.2քմ մակերեսով հողամասը՝48762 դրամով,ուղղակի վաճառքի ձևով օտաել Գնել Վաչիկի Անանյանին:
2. Մաշտոցի 1/2 հասցեում գտնվող 60.2/54.0քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կետը՝595980 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 60.2քմ մակերեսով հողմասը՝48762 դրամով,ուղղակի վաճառքի ձևով օտարել Կամո Բաբայանին և Լիդա Բաբայանին:

Քաղաքապետ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ